

Մշակութային եւ Հասարակական
Երկարաթարերը
Յոյս
1200 թուման
Հայաստանում 320 դրամ



ԼԵԻՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐ ԹԷ ԱՄԲՈՒՏԱՎԱՐ

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- 2 **Համայնք**
- 4 **Վանի երկրաշարժը եւ Հայաստանը**
- 5 **Տարօն Մարգարեան՝ Երեւանի նոր քաղաքապետ՝ Տիգրան Աւետիսեան**
- 6 **2012-ի ընտրութիւններին ընդառաջ Գոհար Աբրահամեան**
- 7 **Հայկական եթերի ցածրորակ սերիալները Սիրանոյշ Գեւորգեան**
- 17 **Քանաստեղծութիւն՝ Ինգերորգ Քախման**
- 18 **Երբ ազգուան է խախտում սահմանը Կոլիա Տէր Յովհաննիսեան**
- 20 **Ռուբէն Մանգասարեան՝ անկախութեան, երկրաշարժի եւ Պարաբաղի լուսանկարիչ Գոհար Աբրահամեան**
- 23 **Թւային տեխնոլոգիաները սահմանափակում են յիշողութիւնը Նունէ Մարտիրոսեան**
- 24 **Մեր եղունգները մեր առողջութեան հայելին են**
- 25 **Համահայկական խաղերը եւ ծագած դժգոհութիւնները**
- 28 **Ժամանց**

Մշակութային եւ Հասարակական

Յոյս

Երկշաբաթաթերթ

Ե օրի, թիւ 110, Նոյեմբեր 9, 2011,
1200 թուման
Հայաստանում 320 դրամ



- 8 **Լեւոն Տէր-Պետրոսեան՝ ժողովրդավար թե՛ ամբոխավար**
- 9 **Ռ՛վ է Լեւոն Տէր-Պետրոսեանը՝ ժամանակագրութիւն**
- 10 **Պատերա՛զմ թե՛ խաղաղութիւն Լեւոն Տէր-Պետրոսեան**
- 14 **1996, Սեպտեմբերի 26՝ ժողովրդավարութեան պայքարի մոռացւած օր Վահան Իշխանեան**
- 16 **ԼՏՊ-ՀՅԳ վերջին հակաճառութիւն**

Պ ա ր ս կ ե ր է ն ք ա ժ ի ն

2	Այս համարի հայերէն էջերում	6	Կովկասում անկայունութեան գործոնները Մահմուդ Վաէզի	12	Հայաստանի անկախութեան լուսանկարիչ Իրանահայ գրականութիւնը «Խուլջէ» շաբաթաթերթի էջերում
4	Իրանում ՀՀ դեսպան՝ Գրիգոր Առաքելեանի ելոյթը «Կովկասի հարցերի ուսումնասիրութեան կենտրոն»-ում	8	Հայաստանի քաղաքական անցուղարձը		
		10	Ռուբէն Մանգասարեան՝		

<p>Յոյս</p> <p>Հասարակական-մշակութային երկշաբաթաթերթ</p> <p>Արտօճատը՝ Լեւոն Ահարոնեան</p> <p>Խմբագիր՝ Ռոբերթ Սաֆարեան</p>	<p>Խմբագրական կազմ՝</p> <p>Քարմէն Ազարեան, Լիա Խաչիկեան, Գարուն Սարգսեան, Արմինէ Մելիք-Իսրայելեան</p> <p>Գեղարւեստական ձեւաւորում՝ Լիա Խաչիկեան</p>	<p>Հայերէն բաժնի սրբագրիչ՝ Քարմէն Ազարեան</p> <p>Կայք Քաջիկ Սաֆարեան</p> <p>Մարզական Արման Ստեփանեան</p> <p>Բաժանորդագրութիւն Քաթրին Եաղուբի</p>	<p>Հասցէ՝ Թեհրան, Էնդելար պողոտայ, Վալի Ասր քառուղի համար 1048 66495180 66492693</p> <p>Հեռախօս-հեռապատճեն՝ 66495208</p> <p>hooyes@inbox.com www.hooyes.com</p>
--	---	---	--

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹԻ 80-ԱՄԵԱԿԻՆ ՆԻՐԻԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ «ԱՐԱՐԱՏ»-ՈՒՄ



Ուրբաթ, Նոյեմբերի 4-ի երեկոյեան «Արարատ»-ի «Վաչիկ Ղարաբեգեան» սրահում տեղի ունեցաւ «Ալիք» օրաթերթի 80-ամեակին նւիրած հանդիսութիւն: Ձեռնարկի ընթացքում ցուցադրուեցին «Ալիք»-ի հին համարներից եւ պատմական նկարներ օրաթերթի պատմութիւնից, ինչպէս նաեւ վաւերագրական մի ֆիլմ «Ալիք»-ի մասին: ԹՅԹ առաջնորդի պատգամն ընթերցւեց սրբազան հօր օգնական Տ. Մակար վրդ. Աշգարեանի միջոցով, որից յետոյ իրենց ողջոյնի խօսքն ասացին ԹՅԹ ատենապետ Էդուարդ Բաբախանեանը, «Ալիք»-ի նախկին խմբագիրներից Նորայր Էլսայեանը, ներկայ խմբագիր Դերենիկ Մելիքեանը եւ արտօնատէր Ալբերտ

Աճեմեանը: Ծրագրի յաջորդ մասում պարզեւատրուեցին «Ալիք»-ի ներկայ եւ անցեալի խմբագիրները, տնօրէն-վարիչները եւ արտօնատէրերը:

Վերջում ելոյթ ունեցան ՀՀԳ-ի կենտ. կոմիտէի եւ բիւրոյի ներկայացուցիչներ Վիգէն Բաղումեանը, Աղւան Վարդանեանը, եւ Գեւիկ Մկրտչեանը:

Սրահի պատերին փակցւած «Ալիք» օրաթերթի էջերի պատկերները արդէն վկայում էին այն իրականութեան մասին, որ համայնքի ութսունամեայ օրաթերթի էջերում արտացոլւած է իրանահայութեան պատմութեան ընդհանուր պատկերը, ինչն արժանի է աւելի խորն ու մանրագնին ուսումնասիրութեան:



ԹՅԹ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՕԳՆԱԿԱՆ ՏԵՐ ՄԱԿԱՐ ՎՐԴ. ԱՇՔԱՐԵԱՆ

Արդէն Յունիս անսից, ԹՅԹ առաջնորդ Տէր Սեպուհ Արք. Սարգսեանի խնդրանքով Կիլիկոյ կաթողիկոսութեան կողմից Թեհրան է ժամանել Տէր Մակար Վրդ. Աշքարեանը, պաշտօնավարելու որպէս Սրբազան հօր օգնական: Պատգամաւորական ժողովում սրբազան հօր յայտարարութեան համաձայն, նկատի է առնւած, որ Տէր Մակար Սարգսեանը գործունեայ դեր ունենայ յատկապէս Թեհրանում հոգեւոր դպրոց հիմնելու աշխատանքներում: Մատնանշելի է, որ առաջնորդի օգնականի պաշտօնը տարբերում է աւագ քահանայի պաշտօնից, որը առաջնորդի բացակայութեան ժամանակ կարգադրում է թեմի գործերը:



ՄԵԾԱՐԻՆՑ ՎԱՍՏԱԿԱԿՈՐ ՈՒՍՈՒՅԻՉ ԵՒ ՏԵՍՈՒՉ ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԵԱՆԸ

Ուրբաթ Հոկտեմբերի 28-ի երեկոյեան Հ.Մ.Ս.«Րաֆֆի» համալիրի «Սայեաթ Նովա» սրահում կայացաւ Տկն. Աստղիկ Բաբայեանի «Գրքերի Որբանոցը» ժողովածուի շնորհանդէսը, բարձր հովանաւորութեամբ թՅԹ առաջնորդ Տ.Սեպուհ արք.Սարգսեանի եւ համատեղ նախաձեռնութեամբ՝ Հ.Մ.Ս.«Րաֆֆի» համալիրի, Հայկական Բարեգործական Ընդ.միութեան եւ «Արաքս» երկշաբաթաթերթի:



Սոյն ձեռնարկին, որը կազմակերպել էր ոչ միայն «Գրքերի Որբանոցը» գրքի առիթով, այլև վաստակաւոր ուսուցչուհի, տեսչուհի եւ ազգային-հասարակական գործիչ տկն.Ա.Բաբայեանի ողջ գործունէութեան մեծարման նպատակով, ներկայ էին թՅԹ առաջնորդ Տ.Սեպուհ արք.Սարգսեանը եւ նրան ընկերակցող հոգեւոր այրեր, ԻԳՄ նախագահ պրն.Թորգոմ Տ.Յակոբեանը, մշակոյթի եւ ազգային գործիչներ, միութենականներ եւ մտաւորականներ: Միջոցառումը բացւած յայտարարւեց Սրբազան հօր աղօթքով, որից յետոյ «Արաքս» երկշաբաթաթերթի խմբագիր

պրն. Մովսէս Քեչիշեանը համառօտ ներկայացրեց յոբելեարի կենսագրականը: Ծրագիրը շարունակւեց «Րաֆֆի» համալիրի վարչութեան նախագահ պրն. Վարդան Բաբախանեանի եւ ՀԲԸՄ վարչութեան անդամ տկն.Այիդա Սողոմոնեանի խօսքերով, ապա պրն.Թ.Տէր Յակոբեանն անդրադարձ ունեցաւ իր յուշերին ինչպէս եւ համայնքում գիրքն ու գրողներին մեծարելու անհրաժեշտութեանը, այնուհետեւ պրն.Ռուբէն Աւագեանը եւ «Րաֆֆի» համալիրի մշակութային բաժանմունքի նախագահ տկն.Քարմէն Ազարեանը ակնարկ ունեցան «Գրքերի Որբանոցը» գրքի բովանդակութեանը՝ ընդհանուր գծերով վեր հանելով նրա գեղարուեստական արժանիքները: Վերջում ելոյթ ունեցաւ թՅԹ առաջնորդ Տ.Սեպուհ արք.Սարգսեանը, որն արժեւորելով հեղինակի գրական ժառանգութիւնը, մասնաւորաբար շեշտեց գրքի եւ ընթերցանութեան կարեւորութիւնը: Ելոյթ ունեցողները անդրադառնալով գրքի հեղինակի կեանքին ու գործունէութեանը, իմիջիայլոց իրենց յուշերով ներկայացրին Տկն.Ա.Բաբայեանի եւ յատկա-

պէս նրա ղեկավարած «Թովմասեան» դպրոցի՝ ժամանակին ունեցած մեծ դերը, եւ նրա միութենական ակտիւ անցեալն ու ներկան: Իսկ գեղարուեստական բաժնում ասմունքներով հանդէս եկան Ժ.Ամիրեանը եւ Ա. Բաղումեանը: Վերջում Տկն.Բաբայեանի շնորհակալական խօսքերից յետոյ երկու միութիւնների կողմից նրան յանձնւեցին գեղեցիկ յուշանւերներ ու զնահատագրեր: Հարկ է նշել, որ այս ձեռնարկը առանձնանում էր յատկապէս նրանով, որ հակառակ վերջերս հանդիպած նմանատիպ միջոցառումների, սրահը լեփ-լեցուն էր եւ չկրկնւեց դատարկ աթոռների տխուր պատկերը: Սա ինքնին ողջունելի եւ ուրախութեան առիթ էր թէ՛ կազմակերպիչ երկու միութիւնների ու «Արաքս» երկշաբաթաթերթի համար, եւ թէ՛ ողջ համայնքի, որը մէկ անգամ եւս ապացուցեց, որ ընդունակ է նման ճիշտութեամբ պարզեւատրել ու զնահատել իր արժանի զաւակներին: Նշենք նաեւ, որ միջոցառման վերջում ներկաները վայելեցին երկու միութիւնների կանանց բաժանմունքների համագործակցութեամբ բացւած ճիշտ սեղանը:

ՎԱՆԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ



ՎԱՆԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ ՈՐԵՒԷ ԿԵՐՊ ՉԻ ՎՆԱՍԵԼ ՀԱՆԿ-ԻՆ

Հոկտեմբերի 23-ին Վան քաղաքի մօտակայքում տեղի ունեցած երկրաշարժի ուժգնութիւնն էպիկենտրոնային գօտում կազմել է 9-10 բալ:

Հայկական ատոմային էլեկտրակայանի հեռաւորութիւնն էպիկենտրոնային գօտուց կազմում է մօտ 160 կմ: ՀՀ տարածքում երկրաշարժը զգացել է 3-5 բալ ուժգնութեամբ:

ՀԱԷԿ-ում երկրաշարժի ուժգնութիւնը եղել է 3 բալ, եւ ատոմակայանին որեւէ վնաս չի եղել ու չէր կարող լինել, քանի որ այն հաշւարկւած է առնւազն 9 բալ ուժգնութեան համար:

Աւելին, թուրքիայում տեղի ունեցած երկրաշարժը ՀՀ տարածքում որեւէ բնակավայրի, որեւէ շէնքի կան

չհնութեան որեւէ վնաս չի հասցրել: ՀԱԷԿ-ի գլխաւոր տնօրէն Գագիկ Մարկոսեանը տեղեկացրեց, որ երկրաշարժ իրենց մօտ զգացել է ընդամենը 2-3 բալ ուժգնութեամբ, որի մասին նոյնիսկ ակտիւ չէր լինել, իսկ Հայկական ատոմակայանը Սեպտեմբերի 11-ից կանգնած է պլանային վերանորոգման աշխատանքների:

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ ՏԵՂՓՈՒՏՈՂ ՕԴԱՆԱԻՆ ՄԵԿՆԵՅ ԷՐԶՐՈՒՄ

Հոկտեմբերի 28-ին, Երեւանի «Էրեբունի» օդանաւակայանից թուրքիայի Էրզրում քաղաք է ուղեւորել ՀՀ կառավարութեան աջակցութիւնը՝ 40 տոննա բեռ (100-ից ավելի վրաններ, 500 քնապարկ եւ 7000-ից ավելի անկողնային պարագաներ) տեղափոխող ԻԼ-76 ինքնաթիռը:

Յիշեցնենք, որ Հոկտեմբերի 23-ին ժամը 15:41-ին Վան քաղաքի մօտակայքում տեղի է ունեցել ուժեղ երկրաշարժ, որի հետեւանքով կան զոհեր ու ակտիւ չէր լինել:

Անցեալ օրը Հայաստանը դիւանագիտական խողովակներով ստացել էր թուրքիայի կառավարութեան օգնութեան պաշտօնական յայտը: Այս մասին յայտնում են Արտակարգ ալիք լրատւական կենտրոնից:

28 Հոկտեմբերի, 2011



ՏԱՐՈՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ՝ ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿՊԵՏ

Տիգրան Աւետիսեան

Երեւանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երեւանի քաղաքապետի պաշտօնակատար Տարօն Մարգարեանի որոշմամբ, Նոյեմբերի 4-ին կը գումարուի Երեւան քաղաքի աւագանու արտահերթ նիստ:

Քաղաքապետարանի պաշտօնական կայքէջում հրապարակւած հաղորդագրութեան համաձայն, նիստի օրակարգում Երեւանի քաղաքապետի արտահերթ ընտրութիւնների ժամկետը սահմանելու մասին հարցն է:

Յիշեցնենք՝ երկուշաբթի երեկոյեան Հանրապետական կուսակցութեան գործադիր մարմնի եւ խորհրդի նիստի ժամանակ կուսակցութեան եւ Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանի առաջարկութեամբ, Երեւանի քաղաքապետի պաշտօնում առաջադրել է փոխքաղաքապետ, քաղաքապետի պաշտօնակատար Տարօն Մարգարեանի թեկնածութիւնը:

Հանրապետականի խօսնակ Էդուարդ Շարմազանովը «Ազատութիւն» ռադիօկայանին փոխանցեց, որ գործադիր մարմինը որոշումը կայացրել է միաձայն: Շարմազանովի խօսքով՝ Տարօն Մարգարեանը մեծ հեղինակութիւն է վայելում Երեւանի բնակիչների շրջանում, ժամանակին եղել է լաւագոյն թաղապետերից մէկը:

«Վերջին շրջանում նա իրեն արդարացրել է որպէս քաղաքապետի առաջին տեղակալ, նաեւ ցոյց տւեց, որ իր կերպարը համապատասխանում է պետական պաշտօնեայի այն չափանիշին, որի մասին մեր նախկին համագումարի ժամանակ խօսեց նախագահ Սարգսեանը, եւ ես կարծում եմ եւ համոզւած եմ, որ Տարօն Մարգարեանը քաղաքա-



պետարանի մեր գործընկերների հետ միասին կարող է լուծել այն խնդիրները, որոնք ծառայած են մեր մայրաքաղաքի առջեւ», - ասաց Շարմազանովը:

Նախկին քաղաքապետից դժգոհում էին մասնաւորապէս ապամոտաժւած եւ ապամոտնաժւան վտանգի տակ յայտնւած կրպակատէրերը: Թէ ինչ է սպասում այս հարցում, Շարմազանովն ասաց. - «Երբ նոր քաղաքապետի ընտրութիւնը լինի, նոր քաղաքապետը իր գործընկերների հետ միասին կը ներկայացնի այն առաջնահերթութիւնները, որոնք կան: Ես ընդամենը կարող եմ կուսակցական առումով ասել, որ կուսակցութիւնը զոհ է եղել նաեւ պարոն Կարէն Կարապետեանի աշխատանքից»:

Էդուարդ Շարմազանովը կարծում է, որ նոր քաղաքապետը իր բոլոր, այդ թւում՝ կողմիցիոն գործընկերների հետ կանի հնարաւորը Երեւանի խնդիրներին դրական լուծում տալու համար:

Երեւանի աւագանիում «Բարգաւաճ Հայաստան» խմբակցութեան ղեկավար Գուրգէն Գասպարեանը «Ազատութիւն» ռադիօկայանի հետ զրոյցում նշեց, որ Երե-

ւանի քաղաքապետի սեփական թեկնածուն առաջադրելու կամ չառաջադրելու հարցը դեռեւս պէտք է քննարկել ինչպէս կուսակցութեան, այնպէս էլ աւագանիում խմբակցութեան նիստում: Հարցին, թէ չի բացառու՞մ, որ ԲՀԿ-ն քաղաքապետի պաշտօնի համար առաջադրի իր սեփական թեկնածուին, Գուրգէն Գասպարեանը պատասխանեց. - «Մենք նախորդ անգամ չենք ունեցել մեր թեկնածուն, իմ անձնական կարծիքով, ինձ չի թւում, որ հիմա էլ կունենանք, ուղղակի ես չեմ էլ կարող բացառել: Ոչ կարող եմ հաստատել, ոչ էլ կարող եմ բացառել: Դա քաղաքական որոշում է, որը պէտք է կուսակցութիւնը կայացնի»:

Տարօն Մարգարեանի թեկնածութեան եւ քաղաքապետի պաշտօնում ընտրելու դէպքում նրա հետ համագործակցութեան վերաբերեալ Գասպարեանն ասաց, թէ Մարգարեանի հետ արդէն բաւականաչափ համագործակցել են ու նրա գործունէութիւնը միայն դրական են գնահատում:

Աղբիւր՝ «Ազատութիւն»
ռադիօկայանի կայք

2012-Ի ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ԸՆԴԱՈՒՄ

Գոհար Արքայազան

Հայաստանի երկրորդ գլխավոր իշխող կուսակցութեան առաջնորդ, մեծահարուստ Գագիկ Ծառուկեանը փորձել է հերքել այն խօսակցութիւնները, թէ կոալիցիոն գործընկերների միջեւ տարածայնութիւնները խորանում են, որոնք նոր թափ էին ստացել անցեալ շաբաթ վարչապետ Տիգրան Սարգսեանի երկիմաստ յայտարարութիւնից յետոյ:

Հայաստանի հանրապետական կուսակցութեան անդամը եւ ՀՀ կառավարութեան ղեկավարը անցեալ շաբաթ նախագրուշացրել էր, որ այն կուսակցութիւնները, որոնք կը հրաժարւեն ՀՀ-ի հետ համագործակցելուց, կը յայտնւեն «կոտրած տաշտակի առաջ»: Վերլուծաբանները շտապեցին այս յայտարարութիւնը կապել Ծառուկեանի «Բարգաւաճ Հայաստանի» հետ, որը, փաստօրէն, հրաժարել է 2012 թ. խորհրդարանական ընտրութիւններում ՀՀ-ի հետ միասնական բլոկում մասնակցելուց եւ դեռ անորոշ է՝ կաջակցի՞ արդեօք նախագահ Սերժ Սարգսեանին 2013 թ. նախագահական ընտրութիւններում, չնայած նման բովանդակութեամբ յուշագիր են ստորագրել: Անցած կիրակի վարչապետը որոշ մեկնաբանութիւններ էր տւել իր հակասական յայտարարութեան առնչութեամբ, որն արւել էր Հայաստանում նախընտրական զարգացումների ֆոնին: Վարչապետն ընդգծել է, որ իր խօսքերն առաջին հերթին վերաբերում են ընդդիմութեանը, սակայն կրկին յիշեցրել է, որ 2007-ի խորհրդարանական եւ 2008-ի նախագահական ընտրութիւններից յետոյ ՀՀ-ն կարող էր միայնակ ղեկավարել կառավարութիւնը, սակայն «նախընտրեց համագործակցութիւնը»՝ նախագահ Սարգսեանի սկզբունքներին համապատասխան: Երկուշաբթի լրատւամիջոցներից մէկին տւած հարցազրոյցի ժամանակ ԲՀ նախագահ Գագիկ Ծառուկեանն ասել է. «Իշխող քաղաքական ուժերը ներկայացնող գործիչներն այս ընթացքում մէկ անգամ չեն հրապարակաւ բաւականաչափ թափանցիկ ակնարկել, որ մակերեսային յօրինովի աժիոտաժները չեն կարող կապ ունենալ իրական քաղաքական գործընթացների հետ»: Ծառուկեանը յաւելել է, որ առաջիկայ խորհրդարանական ընտրութիւններում ԲՀ-ի նպատակն է առնուազն պահպանել իր տեղերը խորհրդարանում եւ նոյնիսկ փորձել աւելացնել իր ներկայութիւնը: Ներկայումս 131-տեղանոց խորհրդարանում, որտեղ ՀՀ-ն մեծամասնութիւն է կազմում, ԲՀ-ն 18 տեղ ունի:



Թէւ ՀՀ ԲՀ-ի քաղաքականութեանը համագործակցութիւնը, սակայն կարծում է, որ եթէ ճիշտ աշխատանք տարւի, եւ հնարաւոր դառնայ «արթնացնել հասարակութիւնը», ապա հնարաւոր է, որ ընդդիմա-

դիր ուժերի համատեղ ներկայացւածութիւնը խորհրդարանում 50 տոկոսից աւելի լինի: ՀՀ-ի խմբակցութեան անդամ Արտաշէս Շահբազեանն էլ, նախընտրական կանխատեսումներ անելով, վստահ է, որ ընդդիմութիւնը միասնաբար չի գնայ ընտրութիւնների, մինչդէռ իշխանական կոալիցիան կը գնայ: Հայաստանի դեմոկրատական կուսակցութեան նախագահ Արամ Սարգսեանը, անդրադառնալով ներքաղաքական զարգացումներին, կարծում է, որ ներքաղաքական իրավիճակը լարւած է եւ մինչեւ ընտրութիւններ էլ աւելի է լարւելու, քանի որ, ըստ նրա, այդպէս էլ չծեւաւորւեց «երկիրն այս ծայրագոյն վիճակից հանելու ծրագիրը»: «Հայաստանում այդպէս էլ չյաջողւեց երկիրը ճգնաժամից դուրս բերելու համար ձեւաւորել հաւաքական թիմ եւ յստակ քաղաքական ծրագիր, քանի որ կոալիցիային այդպէս էլ չյաջողւեց կրճատել ստւերը, ազատել մենաշնորհից եւ օլիգարխիայից», -ասում է Սարգսեանը:

Աղբիւր՝ «ԱրմենիաՆաւ»
www.armenianow.com

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԹԵՐԻ ՉԱԾՐՈՐԱԿ ՍԵՐԻԱԼՆԵՐԸ

Սիրանոյշ Գեւորգեան

Հայաստանում շարունակում են քննադատութիւններ հնչել հեռուստատեսային արտադրանքի, մասնաւորապէս՝ սերիալների հասցիին, սակայն դրանց բովանդակութիւնը, ըստ էութեան, չի փոխուում: Հեռուստաընկերութիւններին մեծ լսարան եւ գովազդային հսկայական շահոյթներ բերող սերիալների բովանդակութեանը վերջին տարիներին անդրադարձել են բազմաթիւ արեւստագէտներ, հոգեբաններ, կոնֆլիկտաբաններ, նոյնիսկ պատգամաւորներ՝ պահանջելով բարելաւել դրանց բովանդակութիւնը՝ հանրութեան, յատկապէս պատանիների եւ երիտասարդների հոգեբանութեանը չվնասելու համար: Ի պատասխան սերիալ արտադրողներն ասում են, որ իրենք արտացոլում են իրական կեանքը եւ բնաւ էլ նպատակ չունեն հերոսացնելու յանցագործներին, այլ փորձում են վեր հանել հասարակական կեանքի յոռի երեւոյթներն ու բարքերը: «Տելեմեդիակոնտրոլ» ընկերութեան ամենշաբաթեայ մոնիթորինգի համաձայն՝ Հայաստանում ամենաշատ դիտող հաղորդումների աղիւսակում գերակշռում են սերիալները՝ «Աննա», «Հրեշտակների դպրոցը», «Եզրագծից այն կողմ», «Դժար ապրուստ», «Անուրջներ», «Լիալուսին» եւ այլն: Ընդ որում, առաջին երկու սերիալները շաբաթներ շարունակ գլխաւորում են այդ աղիւսակը: Մէկ այլ հետազոտութեան համաձայն՝ սերիալ դիտում է Հայաստանի բնակչութեան գրեթէ կէսը: Երիտասարդ կոնֆլիկտաբանների ակումբը մի քանի ամիս առաջ մտահոգութիւն էր յայտնել, որ սերիալների հերոսների (որոնք կամ քրեական աշխարհի ներկայացուցիչներ են, կամ



շատ դաժան կեանք ունեցող մարդիկ) կեանքում հնարաւորինս շատ դժբախտութիւնների եւ տառապանքների տեսարանները հեռուստադիտողների մօտ կեանքի վերաբերեալ թիւր պատկերացում են ձեւաւորում: Կոնֆլիկտաբաններին անհանգստացնում է նաեւ այն, որ սերիալները լի են սեռական, ֆիզիկական եւ հոգեբանական բռնութեան տեսարաններով: «Նման սցենարները, հեռուստադիտողների մէջ ստեղծելով սերիալային անցանկալի ինքնութիւն, նրանց դրդում են ներկայացող վարքը պրոյեկտել իրական կեանքում: Այդ միջոցով հասարակութեան տեսական «մշակումը» մարդկանց մէջ ձեւաւորում է խեղած հոգեբանութիւն: Սերիալները բացասաբար են անդրադառնում յատկապէս անչափահասների վրայ, ովքեր տեսածն իբրեւ իրականութիւն ակնկալելու առումով աւելի խոցելի են: Անչափահասները սերիալների հերոսներին ընդունելով որպէս չափանիշ՝

«յաջողութեամբ» նմանակում են նրանց վարքը, խօսելաոճը եւ բառապաշարը, որոնք մեծապէս աղաւաղում են մայրենին», - ասում են կոնֆլիկտաբանները հեռուստատեսութեան եւ ռադիոյի ազգային յանձնաժողովին եւ սերիալներ արտադրող՝ «Հ1», «Արմենիա» եւ «Շանթ» հեռուստաընկերութիւններին: Ակումբի անդամ, կոնֆլիկտաբան Աստղիկ Խաչատրեանը «ԱրմենիաՆաուին» ասում է, որ այս ընթացքում ոչինչ չի փոխել: «Սերիալներ արտադրող հեռուստաընկերութիւններից ոչ մի արձագանք չենք ստացել, իրավիճակը որեւէ կերպ չի փոխել, դեռ մի բան էլ աւելացել են բռնութեան տեսարանները, քանի որ սերիալներն են աւելացել», - ասում է Խաչատրեանը:

Տեղեկատւական անվտանգութեան փորձագէտ Վահրամ Սիրաքեանը, ով «Ազրեսիւ սոցիալական դիրքորոշումների ձեւաւորումը լրատւամիջոցներում» վերնագրով հետազոտութիւն է հեղինակել, «ԱրմենիաՆաուին» ասում է, որ հեռուստատեսութիւնը՝ որպէս ոչ ֆորմալ կրթական ինստիտուտ, իր ազրեսիւ բովանդակութեան պատճառով դիսֆունկցիոնալ ազդեցութիւն է ունենում լսարանի վրայ: «Հայկական ապասոցիալական, ազրեսիւ ֆիլմերն ու հաղորդաշարերն առաւել ուժեղ են ազդում հայ լսարանի վրայ, քանի որ ազդեցութեան գործօնն ու թիրախը նոյն մշակոյթի, լեզուի, սոցիալական իրականութեան կրողն են», - ասում է փորձագէտը:

Աղբիւր՝ «ԱրմենիաՆաու»
www.armenianow.com


ԼԵԻՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐ ԹԷ՝ ԱՄԲՈՒՏԱՎԱՐ

Տեր-Պետրոսեանի անուան եւ մտածելակերպի հետ է կապուած Հայաստանի Հանրապետութեան հիմնադրման եւ քաղաքականութեան պատմութիւնը: Կողմ թէ դէմ, ոչ ոք կարող է հերքել այս իրականութիւնը: Նա թէեւ եկել է գիտութեան ոլորտից, սակայն հմուտ քաղաքագետ է: Ահա նրա շեշտը *ռեալ փոլիթիք* -ի վրայ: Հէնց այստեղից է գալիս նաեւ նրա մօտեցումը Ղարաբաղի հակամարտութիւնը կարգաւորելու հարցին: Մերժել ամէն տեսակ զիջում նրա տեսակէտից անհիմաստ բան է իրական քաղաքականութեան ոլորտում եւ կարելի է մեծ վնասներ բերել ցանկացած ժողովրդի համար: Նա իր մտքերը շարադրում եւ բացատրում է պարզ եւ հանգամանօրէն: Բայց միաժամանակ, նրա մէջ նկատելի է հակադեմոկրատական հակումը, որը երեւի արդիւնքն է սովետական շրջանում նրա անհատականութեան ձեւաւորման իրականութեան: Նա երբեմն այնքան պարզ է խօսում ժողովրդի հետ, որ հակառակորդները կարողանում են ժողովրդին դրդել նրա դէմ, ինչպէս օրինակ իր հրաժարականին յանգող մամլոյ ասուլիսում: Բայց եւ կարողանում է հրապարակ հանել եւ հրապարակում պահել մեծ թուվ ժողովուրդ, հանգամանք, որ կարելի է բնութագրել որպէս ամբոխավարութիւն: Գաշնակցութեան գործունէութեան կասեցումը եւ երկրորդ շրջանում իր ընտրութեան դէմ բողոքներին ուժային խիստ վերաբերմունքը, նրա գործունէութեան մութ կէտերն են, որոնք մինչ օրս գործ են ածում նրա դէմ: Ստորեւ կարող էք կարդալ Տեր-Պետրոսեանի գործունէութեան համառօտ ժամանակագրութիւնը, նրա բացատրութիւնները Ղարաբաղի հարցի փուլային կարգաւորման մասին (որն արդէն պատմական կարեւորութիւն ունի եւ անձանօթ ընթերցողը, առանց բուն գրութիւնը կարդացած լինելու, յաճախ ընդունում է Ղարաբաղը ծախելու մեղադրանքը նրա դէմ), ինչպէս նաեւ նրա բռնապետականութեան դէմ գրած Վահան Իշխանեանի յօդուածը: Յուսով ենք, որ այսպիսով մեր ընթերցողին առիթ ընձեռնած կը լինենք իր անկախ դատողութիւնն ունենայ Հայաստանի քաղաքական ամենակարեւոր դէմքերից մէկի մասին:

Ռ.Ս.



ՄԵԱՆ,



Ո՛Վ Է ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԸ Ժամանակագրություն

1945. Ծնել է Սիրիայի Յալեպ քաղաքում: 1946-ին ընտանիքի հետ տեղափոխել է Երևան:

1968. Աւարտել է Երևանի պետական համալսարանի արելեյագիտական բաժինը, արաբերեն լեզու եւ գրականութիւն մասնագիտու-

թեամբ:

1987. Լենինգրադի համալսարանից ստացել է բանասիրական գիտութիւնների դոկտորի գիտական աստիճան:

1972-78. Աշխատել է Մանուկ Աբեղեան անուան գրականութեան ինստիտուտում:

1978-85. Մատենադարանի գի-

տական քարտուղար: 1985-ից մատենադարանի աւագ գիտաշխատող:

Տիրապետում է ռուսերէն, ֆրանսերէն եւ այլ արեւմտեան լեզուների: Բազմաթիւ գիտական յօդածների եւ գրքերի հեղինակ է:

1966. Ձերբակալել է եւ մէկ շա-



Լեւոն Տէր-Պետրոսեան-Վազգէն Սարգսեան՝ բարդ յարաբերութիւններ

Երբ Լեւոն Տէր -Պետրոսեանը բանակը դուրս բերեց Երեւանում իր ընտրութեան դէմ բողոքող ցուցարարների դէմ, Վազգէն Սարգսեանը նրա պաշտպանութեան նախարարն էր: Սակայն քիչ անց, Վազգէնը արդէն Սերժ Սարգսեանի եւ Ռոբերտ Քոչարեանի հետ Լեւոնի դէմ ձեւաւորած կոալիցիայի (որոնք իրենց կոչում էին երկրապահ ուժեր), կարեւոր դէմքն էր: Տէր-Պետրոսեանի հրաժարականից յետոյ, Վազգէնը Կարէն Դեմիրճեանի հետ միասին դուրս են գալիս Քոչարեանի դէմ: Երկուսն էլ սպանուում են 1999 թւականի ազգային ժողովի ահաբեկչութեան ընթացքում, որն այսօր Լեւոնը կոչում է ոճրագործութիւն եւ պահանջում է դրա լուրջ հետախուզութիւնը:

Սեպտեմբերի 26-ի (1997-ի-Յոյս) իմ մամլոյ ասուլիսը, աւելի ճիշտ՝ ասուլիսի Ղարաբաղին նւիրած հատուածը մամուլում եւ ընդդիմութեան կազմակերպած հաւաքներում բռուն կրքերի բորբոքման առիթ տւեց: Ինձ համար դա անակնկալ չէր, եւ ինչ-որ չափով ես նոյնիսկ աւելի խիստ հակազդեցութիւն էի սպասում:

Անակնկալը բանավէճի որակն էր, իսկ պարզ ասած՝ բանավէճի իսպառ բացակայութիւնը: Խոստովանում եմ, ես չհասայ իմ նպատակին, այն է՝ մամուլում եւ հրապարակային ժողովներում լուրջ բանավէճ ծաւալել հայ ժողովրդի առջեւ ծառայած ամենակնճռոտ խնդրի՝ Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման հնարաւոր ուղիների շուրջ:

Ընդդիմութեան արձագանքը դուրս չէկաւ հայիոյանքի, վերագրումների, պիտակաւորումների ու խեղաթիւրումների շրջանակից:

բաթ կալանքի տակ պահւել Ապրիլի 24-ի ցոյցին ակտիւ մասնակցութեան համար:

1988. Եղել է Ղարաբաղի շարժման Զայաստանի կոմիտէի անդամ:



1988. Դեկտեմբերի 10-ին Ղարաբաղ կոմիտէի միւս անդամների հետ ձերբակալւել է եւ 6 ամիս բանտարկւել է

Մոսկւայում:

1989. Զայոց Զամազգային Շարժման (ԶԶՇ) հիմնադիր անդամ եւ նրա վարչութեան նախագահ:

1989. Օգոստոս. ընտրւել է Խորհրդային Զայաստանի գերագոյն խորհրդի պատգամաւոր: Յետոյ այդ խորհրդի նախագահ:

1991. Դեկտեմբերի 16-ին ընտրւել է անկախ Զայաստանի Զանրապետութեան առաջին նախագահ, ծայների 83 տոկոսով:

1994 Դեկտեմբեր 28. Տէր-Պետրոսեանը յայտարարում է «Դրօ» գաղտնի յանցագործ խմբի բացայայտումը

եւ խմբի կապը Դաշնակցութեան հետ: Խումբը, ըստ Տէր-Պետրոսեանի, նպատակ ունէր անկայունացնել երկիրը: Նա արգելում է Դաշնակցութեան գործունէութիւնը վեց ամսով: Ընդ-



հանուր կարծիքն այն է, որ դա մի պատուակ էր քաղաքական հակառակորդի աշ-

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

Լեւոն Տէր-Պետրոսեան

Չարեց ոչ մի բանական առաջարկ, չներկայացւեց ոչ մի այլընտրանքային ծրագիր, չբերեց ոչ մի հիմնաւոր հակափաստարկ: Սրանից կարելի է անել երկու հետեւութիւն. կ'ան ընդդիմութիւնը չունի դարաբաղեան կարգաւորման որեւէ ծրագիր, կ'ան եթէ ունի, բայց թաքցնում է, այնքան էլ ազգանպաստ գործով չի զբաղւած. աւելի խիստ որակումից ես զերծ եմ մնում:

Ի՞նչ հասկացաւ ժողովուրդն ընդդիմութեան հանած աղմուկից. որ Արցախի համար մենք արիւն ենք թափել, որ գրաււած տարածքները վերադարձնելով վտանգւում է Արցախի գոյութիւնը, որ յանուն Արցախի հայ ժողովուրդը նորից պատրաստ է արիւն թափելու, որ մենք թքած ունենք համաշխարհային կարծիքի վրայ, որ մենք ծնկի կը բերենք եւ Ադրբեջանը, եւ միջազգային հանրութիւնը, որ մենք «ազգովի կը դառնանք ֆիդայի»:

Իսկ յետո՞յ: Ոչ ոք չփորձեց

պատասխանել հետեւեալ պարզ հարցերին.

- այս ամէնն անելուց յետոյ մենք կը հասնե՞նք մեր բաղձալի նպատակին, թէ՞ ոչ.

- երբ մենք թքենք աշխարհի երեսին, նա մեզ ինչո՞վ կը պատասխանի.

- թափելու է Կինոյի տանը հաւաքւած 500 հոգու, թէ՞ մեր ժողովրդի անմեղ արիւնը:

Առնւազն վերջին հարցին կարելի է միանշանակ պատասխան տալ. հինգհարիւրի գլխից մի մազ անգամ չի պակասի, անկախ այն բանից, թէ նրանք այսօր ինչպիսի գոհողութիւնների գնալու պատրաստականութիւն են յայտնում: Երբ Արցախը վտանգի մէջ էր, երբ հակառակորդն ընդհուպ մօտեցել էր Գանձասարին, նրանցից ոչ ոք չարձագանքեց Վազգէն Սարգսեանի կոչին ու չմիացաւ մահապարտների գնդին: Ուրիշի արեան գնով փառք որոնողներից ու հերոս ձեւացողներից մեր ժողովուրդը պէտք է, որ կուշտ լինի:

Ընդդիմութեան շփոթը, բացի քաղաքական նկատառումներից, գուցէեւ մասամբ բացատրւում է անտեղեակութեամբ, որ բնական

է, քանի որ Ղարաբաղում եւ Հայաստանում հակամարտութեան կարգաւորման գործընթացին փորձագիտական մակարդակով տիրապետում են ընդամենը վեց հոգի՝ Արկադի Ղուկասեանը, Ռոբերտ Քոչարեանը, Ալեքսանդր Արզումանեանը, Վարդան Օսկանեանը, Ժիրայր Լիպարիտեանը եւ ես:

Բանավեճի առարկան

Ինչէւէ, բանավեճ չստացւեց, բայց դա ոչ ինձ, ոչ էլ մեր հասարակութեանը չպէտք է հիասթափեցնի: Միեւնոյն է, ազգի ճակատագիրը տնօրինելու յաւակնող ցանկացած քաղաքական գործիչ կամ մտաւորական վաղ թէ ուշ ստիպւած է լինելու հրաժարել հայիոյախօսութիւնից (խօսքս հոգեկան հիւանդների մասին չէ) եւ ժողովրդի առջեւ հանդէս գալ կոնկրետ հաշւարկւած ծրագրով:

Չսպասելով դրան, ես այսօր էլ պատրաստ եմ լրջօրէն քննարկել Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման ցանկացած բանական առաջարկ, համաձայն եմ ցանկացած մակարդակի հրապարակային բանավեճի:

խատանքը կասեցնելու համար:

1996. Սեպտեմբերի 22-ին վերընտրւում է նախագահ, սակայն ընդդիմութիւնը ընտրութիւնները կեղծւած համարելով դիմում է բողոքի ցոյցերի: Սեպտեմբերի 25-ին ցուցարարները ներխուժում են Ազգային ժողովի շէնք: Ձերբակալւում ու ծեծի ու խոշտանգման են ենթարկւում մեծ թւով ընդդիմադիր գործիչներ: Բանակի ստորաբաժանումները եւ տանկերը հաստատւում են Երեւանի փողոցներում:

1998 Փետրւար. Հրաժարւում է

նախագահի պաշտօնից: Հրաժարականի պատճառը Տէր-Պետրոսեանի մօտեցումն է Ղարաբաղի հարցում փոխգիշտումների մասին: Նրա հակառակորդները՝ նրա ժամանակի վարչապետ եւ Ղարաբաղի նախկին նախագահ Ռոբերտ Քոչարեանը, նրա զինեալ ուժերի հրամանատար Վազգէն Սարգսեանը եւ Ներքին գործերի նախարար Սերժ Սարգսեանը, Տէր-Պետրոսեանի փուլային պլանը Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման համար հանրութեան ներկայցնում են իբ-

րեւ «Ղարաբաղը ծախելու» ծրագիր եւ նրան պարտադրում են հրաժարել:

1999. Հոկտեմբեր 27. Տէր-Պետրոսեանին հրաժարել պարտադրող կարեւորագոյն քաղաքական դէմքը՝ Վազգէն Սարգսեանը, զոհուում է Ազգային ժողով ներխուժած ահաբեկիչների միջոցով: Երկու շրջան նախագահ է ընտրւում Ռոբերտ Քոչարեանը: Այս տարիների ընթացքում քաղաքական ակտիւ կեանքին չի մասնակցում Տէր-Պետրոսեանը:

2005-7. Հրատարակւում է Տէր-Պետրոսեանի գրչին պատ-



Սակայն բանավեճը կարող է առարկայական լինել միայն նախապես կողմնորոշելով մի քանի ելակետային դրոյթների շուրջ, այն է.

- Լեռնային Ղարաբաղի հարցը պետք է լուծվի պատերազմի՞, թե՞ խաղաղ բանակցությունների միջոցով.

- հնարաւո՞ր է, արդե՞օք, յաւերժօրէն կան թէկուզ երկար ժամանակով պահպանել ստատուս քւօն եւ Ղարաբաղի խնդրի չկար-

գաւորած վիճակը.

- Ղարաբաղին եւ Հայաստանին ձեռնտու է հարցի կարգաւորա՞ծ, թե՞ չկարգաւորած վիճակը.

- հարցը պետք է լուծվի փոխզիջումով, թե՞ կողմերից մէկի պարտութեամբ, եւ այդ դէպքում ո՞վ է լինելու պարտուող կողմը:

Այս դրոյթների շուրջ եւ յստակ կերպով արտայայտել եմ բազմիցս եւ այսօր էլ պնդում եմ, որ՝

- պատերազմը պետք է բացառվի, ուստի եւ Ղարաբաղի հարցը

պետք է լուծվի միայն ու միայն խաղաղ բանակցությունների միջոցով.

- ստատուս քւօն երկար ժամանակով պահպանել հնարաւոր չէ, որովհետեւ դա թոյլ չեն տայ ո՛չ միջազգային հանրութիւնը, ո՛չ էլ Հայաստանի տնտեսական կարողութիւնները.

- Ղարաբաղին եւ Հայաստանին ձեռնտու չէ հարցի չկարգաւորած վիճակը, որովհետեւ դա զգալիօրէն խոչընդոտում է Հայաստանի, հետեւաբար նաեւ Ղարաբաղի տնտեսական զարգացմանը, բարդութիւններ ստեղծում միջազգային հանրութեան եւ մանաւանդ հարեւան երկրների հետ յարաբերութիւններում, որոնք կարող են ծակատագրական նշանակութիւն ունենալ.

- Ղարաբաղի հարցի լուծման միակ տարբերակը փոխզիջումն է, որը նշանակում է ոչ թէ մի կողմի յաղթանակ եւ միւսի պարտութիւն, այլ հակամարտութեան յազեցման վիճակում ձեռքբերած հնարաւոր համաձայնութիւն:

Թող չփորձեն ժողովրդին մոլորեցնել, ասելով, թէ փոխզիջումն

կանող «Խաչակիրները եւ Հայերը» պատմաքաղաքական աշխատութիւնը երկու հատորով:

2007. 26 Հոկտեմբեր. Նա յայտարարում է իր թեկնածութիւնը 2008 թականի նախագահական ընտրութիւններին: Խիստ քննադատում է նախագահ Քոչարեանին եւ Հանրապետական կուսակցութեան նախագահութեան թեկնածու Սերժ Սաեգսեանին, նրանց վարչակարգը անւանում է աւազակապետութիւն: Նա մեղադրում է իշխանութեանը 1999 թականի Հոկտեմբերի 27-ի ոճրագործութեան մէջ:

2008. Փետրւար 19. Նախագահական ընտրութիւններ. Պաշտօնական արդիւնքների համաձայն Տէր-Պետրոսեանը ձեռք է բերել քւէնտերի միայն 21.5 տոկոսը: Նրա համակիրներից տասնեակ հազար մարդ բողոքի ցոյցեր են կատարում Երեւանում:



2008. Մարտի 1-ը. Ոստիկանութիւնը գրոհում է Ազատութեան հրապարակում գիշերած ցուցարարների վրայ. սպանւում են ութ մարդ: Քոչարեանը արտակարգ վիճակ է յայտարարում: Բանակը հաստատում է Երեւանի փողոցներում:

2008-ից մինչեւ օրս. Ընդդիմադիր կուսակցութիւններն ու խմբակցութիւնները Հայ Ազգային Կոնգրես ՅԱԿ անւան տակ բողոքի ցոյցեր են կազմակերպում Սերժ Սարգսեանի իշխանութեան դէմ, որը նրանք համարում են անօրինական: Հիմնական պահանջները՝ Քաղբան-

այլընտրանք ունի. փոխզիջման այլընտրանքը պատերազմն է:

Փոխզիջման մերժումը եւ մաքսիմալիզմը (առաւելագոյնը եւ ոչ թէ հնարաւորը ձեռքբերելու ձգտումը) Ղարաբաղի իսպառ կործանման եւ Հայաստանի վիճակի վատթարացման ամենակարճ ճանապարհն է:

Խօսքը չի վերաբերում Ղարաբաղը տալուն կամ չտալուն: Խօսքը վերաբերում է Ղարաբաղը հայկական պահելուն. 3000 տարի այն բնակեցւած է եղել հայերով եւ 3000 տարի յետոյ էլ պէտք է բնակեցւած լինի հայերով:

Իմ ընտրած ուղին ապահովելու է այդ հեռանկարը եւ հնարաւորութիւններ պահպանելու հասնել մեր բաղձալի նպատակին: Արկածախնդիրների ուղին տանելու է դէպի անխուսափելի պարտութիւն: Մենք մի անգամ արդէն, «Ստամբուլը արեան ծով դարձնելով», կորցրել ենք Արեւմտահայաստանը, իսկ մի այլ անգամ՝ պահանջելով Սեւրի դաշնագրով գծւած տարածքները, կորցրել ենք Արեւելահայաստանի կէտը:

Փոխզիջման եւթիւնից բացի կարելու է նաեւ փոխզիջման պահը: Ակնյայտ է, որ փոխզիջման դէպքում հասանելի առաւելագոյնը ձեռքբերելու հնարաւորութիւն ունի ուժեղ կողմը: Հայաստանն ու Ղարաբաղն այսօր ուժեղ են քան երբեւէ, բայց հակամարտութեան չկարգաւորման դէպքում մէկ երկու տարի յետոյ անհամեմատ թուլանալու են: Այն, ինչ մերժում ենք այսօր, ապագայում խնդրելու, բայց չենք ստանալու, ինչպէս բազմիցս եղել է մեր պատմութեան մէջ:

Պէտք է իրատես լինել եւ հասկանալ, որ միջազգային հանրութիւնը երկար չի հանդուրժելու Լեւոնային Ղարաբաղի շուրջ ստեղծւած իրադրութիւնը, քանի որ այն սպառնում է տարածաշրջանային համագործակցութեանն ու անվտանգութեանը, ինչպէս նաեւ Արեւմուտքի նախային շահերին: Վաղ թէ ուշ կողմերին պարտադրելու է կարգաւորման մի փոխզիջումային ծրագիր, որը լինելու է ոչ թէ հարցի իրաւական, այլ քաղաքական լուծում, թէեւ աշխարհի ուժեղները դա հրամց-

նելու են որպէս միջազգային իրաւունքի օրինակելի դրսեւորում: Ոչ Ադրբեջանը, ոչ էլ Ղարաբաղն ու Հայաստանը փոխզիջումից խուսափել չեն կարողանալու, ինչպէս չկարողացան խուսափել բոսնիական եւ արաբախսրայէլեան հակամարտութեան կողմերը:

Փոխզիջումը, սակայն, միայն պարտադրանք չպէտք է դիտել. ընդհակառակը, հակամարտող կողմերն իրենք դեռ պէտք է հսկայական ջանքեր գործադրեն նրա շուտափոյթ կայացման համար, որովհետեւ այլընտրանքն, ինչպէս ասեց, պատերազմն է ու ժողովուրդների նորանոր տառապանքները:

Փոխզիջումն ընտրութիւն չէ լաւի ու վատի միջեւ, այլ վատի ու վատթարի միջեւ, այսինքն՝ փոխզիջումն ընդամէնը վատթարից խուսափելու միջոց է, որից հակամարտող կողմերը հարկադրաբար օգտուում են, երբ հասել են վատթարի գիտակցմանը եւ ի վիճակի են դրսեւորել քաղաքական կամք ու անհրաժեշտ խիզախութիւն:

Փոխզիջման դիմելիս կողմերը

տարկեալների ազատ արձակումը, Մարտի մէկի դէպքի սպանութիւնների հետախուզում, հանրահաւաքների եւ խօսքի ազատութիւն:

2009. Նոյեմբերին, Տէր-Պետրոսեանը քննադատում է հայթորքական պրոտոկոլների որոշ կէտեր, կարեւորագոյնը պատմաբանների յանձնախմբի մասին կէտը, բայց նաեւ քննադատում է դրա հակառակորդներին, որոնք, ըստ նրա, պրոտոկոլները քննարկում էին ոչ թէ ռէալ քաղաքականութեան գետնի վրայ, այլ գաղափարախօսութեան եւ հայ դատի հողի վրայ:

2011 Ապրիլ 11 եւ 28. Ընդդիմու-



թեան հանրահաւաքներում Լեւոն Տէր-Պետրոսեանը յայտարարում է, որ ՀԱԿ-ը պատրաստ է երկխօսութիւն սկսել իշխանութիւնների հետ: Նա դնում է երեք նախապայմաններ, որոնց մասնակի կատարմամբ, սկսում են հանդիպումներ

ՀԱԿ-ի եւ իշխանութիւնների ներկայացուցիչների միջեւ: Սակայն իսկական երկխօսութիւնը չի սկսում:

2011. 28 Հոկտեմբեր. Տէր Պետրոսեանը յայտարարում է, որ ՀԱԿ-ը եթէ յաջողի իշխանութիւններին պարտադրել կայացնել արտահերթ ընտրութիւններ, կը մասնակցի գալիք ընտրութիւններին եւ կը փորձի ապահովել ծանրակշիռ ներկայութիւն, որպէսզի կարողանայ բարձրացնել նախագահ Սերժ Սարգսեանի իմփիչմենտի հարցը:

ԵՐԲ ԼԵՒՈՆԸ ԲԱՆԱԿԸ ԲԵՐԵՅՑ ԵՐԵՒԱՆԻ ՓՈՂՈՅՆԵՐԸ

1996, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28՝ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՍՈՌԱՅԻԱԾ ՕՐԸ

Վահան Իշխանեան

սովորաբար առաջնորդուում են մի քանի նկատառումներով, այն է. ազատել իրենց բնականոն կենսագործունեությունն ու զարգացումն արգելակող եւ լուրջ վտանգներով յղի հակամարտութիւնից. սառնեցնել խնդիրը, հետաձգել այն՝ ժամանակ շահելու, ուժեր կուտակելու եւ ակելի բարենպաստ հանգամանքներում յօգուտ իրենց լուծելու նպատակով. խուսափել անկանխատեսելի բարդութիւններից՝ յոյս փայփայելով, որ հետագայում ժողովուրդների յարաբերութիւններում նոր մտածողութեան արմատաւորման եւ արժէքների վերագնահատման հետեւանքով խնդիրը կարող է կորցնել իր սրութիւնը, եւ սահմաններն, օրինակ, չունենան այն մշանակութիւնը, որ ունեն ներկայումս: Այդ մտածողութիւնն ու արժէքների վերագնահատումն այսօր տիրապետող են Եւրոպայում, վաղը կարող են տիրապետող դառնալ նաեւ Մերձաւոր Արեւելքում, որի մասնաւոր վկայութիւնն է, թերեւս, արաբախորայէլեան խաղաղութեան գործընթացը:

Փոխզիջումն ինչ-որ չափով բաւարարելու է հակամարտութեան բոլոր կողմերին, բայց միաժամանակ ամբողջովին չի գոհացնելու ոչ մէկին: Նախագահ Ալիեւը դա ներկայացնելու է որպէս Ադրբեջանի յաղթանակը, ես փորձելու եմ ներկայացնել որպէս Հայաստանի յաղթանակը: Ադրբեջանական ընդդիմութիւնը համարելու է, որ Ալիեւը դաւաճանեց ու ծախեց Ղարաբաղը: Հայաստանի ընդդիմութիւնը համարելու է, որ ես դաւաճանեցի ու ծախեցի Ղարաբաղը:

Սոյնմբեր 1997

Ուրեմն, կրկնեմ էն ինչ յայտնի է, բայց խլացուում է նոր ընդդիմութեան քարոզչամեքենաներով. 96 թիւ, նախագահական ընտրութիւններում յաղթում է Վազգէն Մանուկեանը, սակայն արդիւնքները կեղծում են իշխանութիւնները ու հռչակում, թէ վերընտրել է Լեւոն Տէր-Պետրոսեանը:

Ժողովրդական ընդվզումը հինգ օր շարունակուում էր, ընդդիմութեան պահանջը մէկն էր՝ բացել քւէաթերթիկների մի քանի պարկ ու վերահաշւարկել: Ի՞նչ էին արել, ընտրութիւնների աւարտից յետոյ, երբ ընտրական տեղամասերի արձանագրութիւններով պարզել էր, որ Լեւոնը չի անցել, նոր արձանագրութիւններ էին գրել ու կեղծել տւեալները: Ընտրութիւնների կեղծիքները բնորոշող «նկարչութիւն» բառը 96 թիւն մտաւ շրաջանառութեան մէջ, որը 2008-ին սկսեցին օգտագործել նրանք, ովքեր առաջին նկարչիստներն էին եղել:

Իշխանութիւնը մերժում էր վերահաշւարկը: Տոյցերը ի վերջոյ յանգեցրին Ազգային ժողովի վրայ գրոհին. Սեպտեմբերի 25-ին ցուցարարները կոտրեցին ԱԺ-ի ճաղերը ու ներխուժեցին շէնք: Ինչո՞ւ հէնց Ազգային ժողով, որովհետեւ այնտեղ էր Կենտրոնական ընտրական յանձնաժողովը: Ես էլ նրանց հետ մտայ ու գնացի ուղիղ կենտրոնական ընտրական յանձնաժողով: Ինձ ներս թողեցին գրասենեակ, ու տեսայ յանձնաժողովի նախագահ Խաչիկ Բեգիրջեանի շփոթած ու երկիւղած դէմքը: Յետոյ, ես պատկերացնում էի, թէ կը գայ էն օրը, երբ Բեգիրջեանը կը պատմի, թէ ինչպէս

ուժային նախարարները՝ Վանօն ու Վազգէնը ստիպել են իրեն կեղծել ընտրութիւնների արդիւնքները: Էդ օրը չեկաւ, փոխարէնը նա ում համար կեղծել էր ընտրութիւնները, բերդում նստելու տեղ կրկին մտաւ քաղաքականութիւն սրբի կերպարով՝ մեղադրելով իշխանութիւններին բոլոր այն բաներում ինչ իր իշխանութիւնն էր արել՝ ընտրութիւններ կեղծելու, սպանութիւնների, կոռուպցիայի մէջ, եկաւ երկրպագուների բանակով, ովքեր նրան կնքեցին ՀՀ «հիմնադիր» նախագահ տիտղոսով:

95 թէ՞ 96 թիւն էր Հայաստանի ժողովրդավարութեան թաղումը: 95-ին եղան ընտրութիւններում առաջին բացայայտ կեղծիքները ու պարտադրեց միապետական սահմանադրութիւնը: Իսկ 96-ին երկրորդ անգամ կեղծեցին ընտրութիւնները, բայց առաջին անգամ անկախ Հայաստանի իշխանութիւնները անկախ Հայաստանի քաղաքացիների ընտրութիւնը տրորեցին զօրքով. Սեպտեմբերի 26-ը խորհրդանշում է հէնց ազատ ընտրութեան տապալումը:

Ի՞նչ կը լինէր, եթէ 96թ. ժողովրդավարութիւնը յաղթէր, ընտրութիւնների միջոցով իշխանութեան զար ընդդիմութիւնը:

«Եթէ ես եւ միւսները ժամանակին սկզբունքայնութիւն ու համարձակութիւն ցուցաբերած լինէինք ու կարողանայինք «հիմնադիր» նախագահին ու նրա յետնասեներակում երկրորդ փուլ լինել-չլինելու հարց որոշող «հզօրներին» ասել պարզ մի միտք՝ «պարտուել ենք՝ գործենք ըստ օրէնքի», ապա հաստատ այլ

Հայաստանում էինք այսօր ապրելու», - ասում է 96-ի իշխանութան ներկայացուցիչ, Ազգային ժողովի փոխնախագահ Կարապետ Ռուբինեանը «Մեղաւորը մենք ենք» տեքստում:

Այնուամենայնիւ 96 թիւը մի բան տւեց, 96-ի շնորհիւ էր որ երկիրը ազատւեց LSՊ-ից: Պարզ դարձաւ, որ Լեւոն Տէր-Պետրոսեանը ոչ լեգիտիմ է՝ զրկւած որեւէ աջակցութիւնից, որն էլ հնարաւորութիւն տւեց 98թ. հեռացնել նրան: Եթէ չունես ընտրող, եթէ նախագահը ընտրողների ծայներով չի ընտրւում, ուժայիններն են նրան պահում, ուրեմն ուժայիններն էլ կարող են հանել:

96-ի այդ նշանակութիւնը ես չէի նկատի, եթէ կրկին Տէր-Պետրոսեանը չդնէր իր թեկնածութիւնը ու չստիպէր համեմատել ներկայ ու նախկին իշխանութիւնները, ներկայ ու նախկին նախագահներին, որտեղ ներկաները դառնում են նախընտրելի: Հենց միայն բանտարկեալների նկատմամբ վերաբերմունքը, 2008-ին ձերբակալւած քաղբանտարկեալներից միայն մի քանիսին էին ծեծել, ստւար մասը ոչ մի հարւած չէր ստացել: Դէ թող լրագրողները հարցնեն՝ Ալեքսանդր Արզումանեանին, Կարապետ Ռուբինեանին, Շանթ Յարութիւնեանին կամ Սուրէն Սիրունեանին ձեզ մատով կպե՞լ են ու նաեւ վերականգնեն, գրեն թէ նա ով էսօր ընդդիմութիւն է, ինչպէս է վարւել 96 թիւն պատգամաւորների հետ: Չեն անի:

Մի անգամ առիթ ունեցայ մուտք գործել Վարդաշէնի քրէակատարողական հիմնարկ հանդիպեցի Սարգիս Հացպանեանի հետ: Նրա խցի դուռը փակ էր, խցից դուրս բերեցին, հանդիպման սենեակում սուրճ խմեցինք ու երկար գրուցեցինք: Բայց միւս քաղբանտարկեալների դռները բաց էին, նրանցից մէկը հանգիստ պտտւում էր շէնքում, ու հըլը վերակացուի վրայ էլ գոռում՝ հըլը



արի ստէ արա, ու համազգեստաւոր վերակացուն խեղճ-խեղճ ենթարկւում էր: Ոսկերչեանին մի հատ հրել էին համաշխարհային աղմուկ բարձրացրին, իրաւապաշտպանները անմիջապէս լցեցին նրա կամեր՝ ո՞վ ա խփել, ո՞նց ա խփել: Իսկ 96-ին լուր չունէիր թէ ինչ է կատարւում ոստիկանութեան, բերդի պատերի ներսում, փաստաբանն ո՞ւմ շունն էր, որ թողնէին հանդիպել կալանաւորի հետ ուր մնաց ես կամ որեւէ լրագրող մտնէր ու սրճէր քաղբանտարկեալի հետ: Միայն ազատելուց յետոյ դժգոյն դէմքով կալանածները պատմում էին, թէ ոնց են իրենց ջարդել:

Սա՞ է կեանքը՝ պայքարում ես մի իշխանութեան դէմ, գրում ես, բացայայտում ես իշխանութեան ապօրինութիւնները, մարդու իրաւունքների խախտումները, ընտրութիւնների կեղծիքները, կոռուպցիան, մէկ էլ ընդդիմութիւն է դառնում նա՝ «հիմնադիրը», ով հիմքն է դրել բռնութեան, կոռուպցիայի, պետական տեռորի, քաղաքական սպանութիւնների ու թաղել ժողովրդավարութիւնը, ում համեմատ ներկաները փառք են, թողնում են շնչես, գործես, հկ բացես ու գիրք տպես իրենց դէմ (LSՊ-ի իշխանութեան ժամանակ անհնար էր առանց ԿԳԲ-ի դաբրո-

յի հասարակական կազմակերպութիւն բացելը, այդ մասին տես «Առանց ընտրութեան» էսսէում), ու քո արած ամբողջ աշխատանքը սկսում է ծառայել «հիմնադիրին» իշխանութեան բերելուն: Չգիտեմ, գուցէ սա հայկական կեանքն է, կարծես միայն Հայաստանում հնարաւոր եղաւ իր դարն ապրած դիակի վերակենդանացումը:

Աւելին, Տէր-Պետրոսեանը գալիս էր վրէժով, մասսաների աջակցութիւնից շատ աւելի անհանդուրժող դարձած ու նրա քսենոֆոբիական հռետորութիւնը «խոստանում» էր շատ աւելի դաժան հաշլեյարդար իրեն չընդունողների նկատմամբ:

Սա մի ընդդիմութիւն է, որ իշխանութիւն ունեցաւ հասարակութեան, մտաւորականների, ակտիւիստների կամքի վրայ, ծախւած ու դաւաճան որակելու տեռորով ճորտացրեց հասարակութեան ակտիւ շերտի զգալի մասը ու նաեւ իշխանութեան մէջ գտնւող բազմաթիւ պաշտօնեանների (մի ծանօթ լրագրող պատմում էր, որ պաշտօնեանները Լեւոնի դէմ յաճախ են խօսում, բայց հենց միացնում ես դիկտաֆոնը վախտում են խօսել՝ շառից հեռու): Այլ կերպ ասած Լեւոնը այս անգամ էլ որպէս ընդդիմութիւն խլեց մարդ-

ՀՅՊ-ԼՏՊ ՎԵՐՉԻՆ ՀԱԿԱՃԱՌՈՒԹԻՒՆ «ԴՐՈՅԻ ԳՈՐԾԻ» ԵՒ «Յ1-Ի ԳՈՐԾԻ» ՀՈՒՐՉ

կանցից ազատ կամք արտայայտելու կարողութիւնը:

ՀՀ-ական իշխանութեան մասին ճշմարտութիւնը ասելը դարձաւ վտանգաւոր բան, եթէ յիշում ես անցածը ուրեմն իշխանութեան կամակատարն ես: Նրա իշխանութիւնից միայն մի բան էր մնացել՝ յիշողութիւնը, այն էլ ուզում էին խլել մեզմից: Ովքեր չէին ուզում զիջել, չէին ուզում յանձնել իրենց յիշողութիւնը, որակում էին դաւաճան ու տակամբ:

2008-ի շարժումը ժողովրդավարութեան պարողիան էր եւ ծաղրը, ՀՀ-ի եւ Լեւոնի ժողովրդավարութիւնից, աւազակապետութիւնից, սպանութիւնից ու կոռուպցիայից խօսելը նոյնն է, թէ նացիստները հրեասիրութիւնից խօսեն, որսորդները կենդանիների պաշտպանութիւնից, մարդասպանները քարոզեն՝ մի սպանիր, գողերը՝ մի գողանայ:

2008-ի Մարտի մէկին երրորդ անգամ զօրք մտցւեց քաղաք: Պարզ է, իշխանութիւնը իր խնդիրն էր լուծում՝ նա ժառանգել էր իր ընդդիմախօսից ընտրութիւններ կեղծելն ու իշխանութիւնը ամէն զնով պահելը: Եթէ մէկ, երկու անգամ ընտրութիւնը կեղծելը թոյլատրելի է, ապա ինչո՞ւ երրորդ, չորրորդ անգամները պէտք է անթոյլատրելի լինի: Բայց իշխանութեան շահերը էս անգամ համընկան նաեւ իշխանութիւն չունեցող մի ստւար հատւածի շահերին ու զօրքը ականայ պաշտպանը դարձաւ էն հազարաւոր քաղաքացիների, ովքեր լուռ տագնապով հետեւում էին, որ յանկարծ նախկինները կրկին ներկայ չդառնան:

Եսպէս ժողովրդավարութիւնը վիրաւորում է՝ յայտնել է նրանց բերաններում, ովքեր իրեն բռնաբարել են ու թաղել, ամօթից նահանջում է, թաքնում, սպասում, որ անցնեն տագնապալի օրերը ու կրկին կարողանայ յայտնել: Ու նրա հետ էլ թաքնել է Սեպտեմբերի 26-ը: Ահա, թէ ինչու են մոռացել նրան:

Հոկտեմբերի 3, Ազատութեան հրապարակ, Լեւոն Տէր-Պետրոսեան՝

«... Այդ գործերով բացայայտել է ահաբեկչական խումբ եւ հետագայում պարզել, որ վերջինիս անդամները դաշնակցականներ են. «Եթէ նրանք քաղաքանտարկեալ էին, ապա այսօր էլ են քաղաքանտարկեալ, այդ դէպքում, ինչո՞ւ Դաշնակցութիւնը չազատեց նրանց, անգամ իր իշխանութեան օրօք, եթէ նրանք անարդար էին դատուել»: Տէր-Պետրոսեանը նաեւ յիշեցրեց, որ «Դրոյի գործը» բացայայտել է Դաւիթ Շահնազարեանը, իսկ «Յ1-ի գործը» բացայայտել է ամբողջ քննութիւնը վարել է ներքին գործերի նախարար, այսօր ՀՀ նախագահի պաշտօնը զբաղեցնող Սերժիկ Սարգսեանը:

Նշենք, որ մինչ օրս այդ գործերով կան կալանաւորւածներ, մասնաւորապէս՝ երկուսը «Դրոյի», մէկը՝ «Յ1-ի գործով»:

Հոկտեմբերի 4, Վահան Յովհաննիսեան, 7or.am -ի հետ հարցազրոյցում

«Բանն այն է, որ ճարպկօրէն նենգափոխուում է իրականութիւնը հետեւեալ կերպ: Շատերը մոռացել են, որ «Դրոյի գործը» եւ «Յ1-ի գործը» բոլորովին տարբեր բաներ են: «Դրոյի գործով», ըստ ամենայնի, ապացոյցները բաւարար էին ասելու, որ կային ձեռքաւարտ մարդիկ, ովքեր քրեական յանցագործութիւն են կատարել: Սակայն նրանց կուսակցական պատկանելութիւնը բացարձակապէս իրաւունք չէր տալիս ղեկավարութեանը ձեռքաւարտել եւ քաղաքական կուսակցութիւնը յայտարարել օրէնքից դուրս: Այ, սա՛ արդէն քաղաքական հետապնդում է: Թող ձեւեր չթափեն: Իսկ «Յ1-ի գործը» «Դրոյի գործի» հետ որեւէ առնչութիւն չունի: «Յ1-ի գործով» նստել են նա: Մենք մեղադրել ենք իշխանութեան դէմ պայքարի համար: Իշխանութիւնն ասում էր, որ մենք այդ պայքարի մէջ անցել ենք որոշակի սահման եւ պատրաստուել ենք իշխանութիւնը տապալել հակասահմանադրական ձեւով, այսինքն՝ զէնքի ուժով: Որ նրանք դա չեն կարողացել ապացուցել, դա փաստ է: Որովհետեւ եթէ կարողանային ապացուցել, մենք կը ստանայինք ոչ թէ չորս տարի կոչերի համար, այլ կը ստանայինք շատ աւելի ծանր դատաւճիռներ: Սիւննոյն ժամանակ ասեմ, որ այդ պայքարի մէջ մենք, իհարկէ, պատրաստ էինք կիրառել ցանկացած մեթոդ, որովհետեւ արդէն ոստիկանութիւնը կրակել էր ժողովրդի վրայ, կրակել էր խաղաղ ցուցարարների վրայ: Եւ երբ իրենք Մարտի 1-ից են խօսում, թող յիշեն, թէ ինչ էին անում իրենք 1994-95թթ. ցուցարարների նկատմամբ, երբ առաջին անգամ Օպերայի հրապարակում ոստիկանները կրակեցին ժողովրդի վրայ»:



Վահան Յովհաննիսեանը (ձախից առաջինը) «Յ1-ի գործով» դատարանում

ՉԱՅՆԱՊԱՏՆԵՆ

Ինգեբորգ Բախման



Աղմկափռածք, լայն ու բարձրածայն
 որ քարշ է գալիս յետեւիցդ,
 աւելի է աղմկում, ամէն ինչ
 աղմկում է եւ բարձր է աղմկում
 եւ դողում են
 տներդ բոլոր,
 ամէն մի ոտնաչափը
 գլխումդ
 ամբողջ ունեցւածքներիդ
 մտածումներիդ, մտածումներդ
 սա անակնկալի է բերում
 այնպիսի մի արագութեամբ
 որը երբեք քոնը չի եղել,
 այս ցնորքը, այն չէ
 այլեւս, այլեւս ոչինչ չէ, եւ
 այլեւս հեռու է
 մինչեւ մեծ տրաքոցի հետ
 որի տակ դու կքում ես
 քեզ վրայ, վերը, դու, որ
 ճեղքում ես ձայնապատնէշը
 դէպի վեր:
 Դու կծկում ես, դու արդէն իսկ
 վերելում ես եւ ճամբորդութեան ես դուրս գալիս
 կայծկլտացող բեկորներով ու ակտոդոդերով
 քանդուած կապերով եւ
 մի այնպիսի խենթ զօրութեամբ, որը
 կոտրելու համար երկինքը միշտ էլ փափուկ է
 եւ երկիրը շատ կարծր:

Գերմանացի անւանի բանաստեղծ Ինգեբորգ Բախմանի անտիպ բանաստեղծութիւնների շարքից Suhrkamp Verlag-ի Frankfurt a. M. 1998-ին լոյս ընծայած հինգ բանաստեղծութիւններն էլ գրւած են բանաստեղծուհու՝ 1964 թւականին Պրագա կատարած այցելութեան, ու նաեւ 1963-65 թւականներին Բեռլինում

բնակելու անմիջական ազդեցութեան ներքոյ: Հայնց Հեօլերը այսպէս է բնութագրում նրանց: «Բանաստեղծութիւններ, որոնց մէջ եՍ-ը իրեն բարձրացւած է գտնում, հասարակական խաղաղ պայմանների մէջ, կամ իրեն վերագտնում, քաղաքների պատմական լանդշաֆտների յիշողութիւնների տարածքների կենսակի

անցեալում»: Հեօլերի բացատրութիւնները ուղղւած են մեծ մասամբ այն տարածւած կարծիքի դէմ, ըստ որոնց բանաստեղծուհին իր վերջին ստեղծագործութիւններում կտրականօրէն երես է թեքել լիրիկայից:

*Ինտերնետային մասնաւոր կայքից
 Թարգմանեց՝ Խաչիկ Խաչեր*



ԵՐԲ ԱԳՌԱԿՆ Է ԽԱԽՏՈՒՄ ՍԱՀՄԱՆԸ

Կոլիա Տեր Յովհաննիսեան

-Չեր գօտին հանէք,- քաղաքավարի, բայց չոր տոնով ասաց համազգեստաւոր կին պաշտօնեան:

-Գուցէ՞ կօշիկներս էլ հանեն,- գօտին բացելով ատամների արանքից նետեց ընկերս ու արժանացաւ պաշտօնեայի սաստող հայեացքին:

Բացի հանքային ջրի փոքր շշից, որը վերցրել էինք դեղահաբեր ընդունելու համար, ուրիշ «վտանգաւոր» կամ արգելած բան չունէինք: Պաշտօնեան գլխի շարժումով ցոյց տալով քիչ հեռու դուրս տակառածել մի աման՝ ասաց.

- Շիշը նետեք դրա մէջ կամ խմեք այստեղ:

-Ջուր է,- ընդդիմացաւ ընկերս,- գիտեք, էլի, տարեց մարդիկ ենք, հազար ու մի դեղ ենք գործածում:

-Բոլոր հեղուկներն էլ արգելւած են,- ասաց պաշտօնեան,- ջուր կարող էք ձեռք բերել տրանզիտ սրահի սրճարանից:

-Էս ինչ օրի հասանք,- փնփնթափ քաղցր ընկերս,- մի ագռաւի չափ էլ չկանք...

-Իզուր ես գայրանում,- ասացի կապելով գօտիս՝ զննման կէտը բարեյաջող անցնելուց յետոյ ու կարգաւորելով անձնական իրերս ձեռքիս պայուսակիս մէջ,- այս բոլորը արւում է մեր իսկ ապահովութեան համար:

-Չուզեցինք այդ գրողի տարած ապահովութիւնը, համը հանել են,- ընկերս չէր հանդարտ-

ւում,- իսկ ինչի՞ց են վախենում:

-Դէ, առեւանգիչներից, տեռորիստներից, միթէ պարզ չի՞:

-Իսկ ովքե՞ր են առեւանգիչները, տեռորիստները:

-Ի՞նչ ես ուզում ասել դրանով:

-Ուզում եմ ասել, որ նրանք էլ մարդ են, մարդ, մարդ, հասկանում ես, իմ, քո, այս պաշտօնեայի նման՝ մարդ. մարդը մարդուց է վախենում: Մի մայի՞ր, է՛, էս բոլոր արդիական սարքաւորումները, արգելքները, ստեղծել են եւ անընդհատ կատարելագործում են միայն մարդու վախից: Սկի մտածել ես քանի՞, քանի՞ համազգեստաւոր պաշտօնեաներ ինչպիսի եռանդով ու կարեւոր գործ անելու մոլուցքով ժամանակ են վատնում այս ապուշ աշխատանքի վրայ... Չէ՞ որ նրանք կարող էին աշխատել օրինակ արտադրութեան ոլորտում:

-Գուցէ զէնքի արտադրութեան մէջ, -հեզմեցի ես...

Ընկերս բան չասաց ու արհամարհական թափ տուեց ձեռքը:

Տրանզիտ սրահի շքեղ խանութների որակեալ ապրանքները շեղեցին մեր ուշադրութիւնը՝ մոռացնել տալով ապարդիւն երկխօսութիւնը: Խմիչքների բաժնում համեմատաբար ցածր գները կանչող-հրաւիրող էին:

-Ի՞նչ կասես, մի կոնեակ չգնե՞նք,- թաքնւած սարկազմով ասաց նա ու քնծիծաղեց: - Ահա եւս մարդկային մի այլ կատակերգութիւն, էստեղ խմիչքը դուրս է

վաճառքի՝ խմիր ինչքան սիրտդ է ուզում, իսկ էնտեղ՝ հարեւան երկրում դա արգելւած է: Չե՞ս տեսնում, թէ ոնց է մեր կեանքն անցնում բազմաթիւ արգելքների մէջ:

-Ինչո՞ւ արգելքներ եւ ոչ օրէնքներ:

-Թող լինի օրէնք, ի՞նչ տարբերութիւն, օրէնքն էլ արգելք է, տաբու. գոնէ օրէնքները ամենուրեք միանման լինէին, ինչպէս կարմիր լոյսը աշխարհի բոլոր խաչմերուկներում. չէ՞ որ այդ օրէնքները ստեղծուում են մարդու կողմից՝ մարդու համար: Իսկ մարդիկ ամէն տեղ էլ մարդ են, գոյները, լեզուները եւ...աստուածներն են տարբեր: Գիտե՞ս, մեր օրերի մարդը պարուրւած է գրւած ու չգրւած բազմաթիւ օրէնքների աներեւոյթ թելերով, խճճւած դրանց մէջ, ինչպէս ճանճը սարդի ոստայնում, բայց ինքը դա չի նկատում, նոյնիսկ չի զգում, կուրօրէն համակերպւում է եւ դրանց առկայութիւնն ընկալում է ենթագիտակցօրէն, որովհետեւ այդ թելերը սկսում են փաթաթել նրա շուրջը աստիճանաբար, ծնւած օրւանից՝ բարուրի հետ, դառնում են նրա էութեան անքակտելի մասը, կաշկանդում նրա շարժումները՝ մարդուն վերածելով խամաճիկի... Չէ, իսկապէս մարդը մի ագռաւի չափ էլ չկայ,- կրկնեց իր քիչ առաջ ասած խօսքը...

Ընկերոջս ըմբոստ բնոյթը ծանօթ էր ինձ: Գիտէի, որ պատանի տարիքում, Հայաստան գնալու է

մուրազը սրտում, փորձել էր լողալով անցնել Արաքս գետը: Դա յաջողել էր, բայց Արաքսի այն ափին, ռուս սահմանապահները որսացել էին նրան, հարցաքննել ու մի քանի ամիս կալանքի տակ պահելուց յետոյ յանձնել Շահի Սաւաքիմ*: Այստեղ էլ նստել էր մի երկու տարի, բայց բանտից դուրս գալուց յետոյ բնաւ չէր փոխել: Երբ դեռ Խորհրդային Միութիւնը չէր փլուզւել, յաճախ ասում էր. «Ինձ չհաւատացին, վատ ժամանակներ էին, կարծում էին լրտես եմ. սիրտս վկայում է, որ էս անգամ Արաքսն անցնեմ, թոյլ կը տան էնտեղ մնալ»: Այնուամենայնիւ, չդիմացայ ու հարցրեցի քիչ նեղսրտւած.

-Իսկ ազնաւն էստեղ ի՞նչ գործ ունի, ինչի՞ ես անդադար մարդուն համենատուն ազնաւի հետ:

Տխրութեան մի սոււեր անցաւ նրա դէմքի վրայից, բան չասաց, բայց երբ տեղաւորւել էինք սրահի յարմարաւետ աթոռների վրայ ու սպասում մեր ուշացած թռիչքին՝ պատմեց հետեւեալը:

- Գիտե՞ս, երբ լողալով անցայ Արաքսը եւ յայտնեցի այն կողմում, ասես գետնի տակից բսնեցին ռուս սահմանապահներն ու թոյլ չտուցին, որ ուշքի գամ: Թեւերս ոլորեցին, յետեւից ձեռնաշղթաներ հագցրեցին ու ռուսերէն հրամայեցին նստել գետնին: Ռուսերէն չգիտէի, կանգնած նայում էի նրանց ու ժպտում: Բոլշեւիկեան «վարդագոյն» քարոզչականութիւնն այնքան ուժեղ էր նստած ուղեղիս մէջ, որ նոյնիսկ երբ ինձ կոպտօրէն հրեցին ու գետին գցեցին, էլի ժպտում էի... Հաւատում էի, որ ինձ կը հասկանան ու... որպէս հայրենասէր հերոսի դափնիներ կը նւիրեն... Այս լաւատեսութեանը նպաստում էր նաեւ լողալով Արաքսը յաղթահարելու եւ հայրենի հողում լինելու խանդավառութիւնս: Գիտէի, որ մեր քաղաքից շատերն են փորձել, բայց ոմանք խեղդւել են դեռ գետի կէտը

չանցած: Այդ պահին լցւած էի հպարտութեամբ ու ինքնավստահութեամբ: Տաք, զով եղանակ էր, երկինքը ջիւնջ, կապո՛յտ, կապո՛յտ: Հիացած նայում էի հրաշագործ բնութեան անմնան գեղեցկութիւններին: Ականջներիս մէջ անդադար Արաքսի խշշոցն էր ու թռչունների ճուղիւնը: Բայց չգիտեմ թաց հագուստներիս, թէ ինքնավստահութիւնս հետզհետէ կորցնելու հետեւանքով՝ սկսեցի դողալ եւ միզելու պահանջ զգացի: Դիմեցի հայերէն: Մէկը մօտեցաւ ու հրացանի խզակոթով հարւածեց մէջքիս ու էլի ռուսերէն ինչոր բան ասաց: Երեւի ասում էր, որ պապանձւեմ: Ժամանակը անցնում էր. հետագային հասկացայ, որ սպասում էին յատուկ կապաւորին՝ ինձ ինչոր բանտ փոխադրելու համար: Այլեւս չկարողանալով զսպել ինձ՝ միզեցի թաց շալւարիս մէջ եւ թերեւս կեանքումս առաջին անգամ մոռացայ մարդ լինելուս հանգամանքը: Ինձ զգում էի՝ մարդկանց կողմից հալածուած գազանի դերում: Մի պահ հայեացքս բարձրացրի վեր (երեւի Աստծուց օգնութիւն հայցելու համար) ու աչքս ընկաւ քիչ հեռու ծառի վրայ նստած մի սեւաթոյր ազնաւի, որը ուղիղ նայում էր ինձ: Շատ չանցած՝ նա ծանր-ծանր թելերը թափահարեց, թռաւ Արաքսի վրայով, այն կողմում հանգրւանեց մի այլ ծառի վրայ ու հեռաւորութեան պատճառով կորաւ տեսադաշտիցս... Նման պահերին, առհասարակ, մարդուն արտառոց մտքեր են այցի գալիս. նստել, մտածում եմ, թէ՛ «Տեսնես ազնաւն ի՞նչ ազգութեան տէր է, եւ անմիջապէս եզրակացնում եմ, որ ազնաւները միայն մէկ ազգութիւն ունեն եւ ամենուրեք խօսում են մէկ լեզուով, ուստի հաւատում ու հասկանում են մէկը միւսին, իսկ մարդիկ՝ ոչ... Գոնէ սրանց մէջ մէկը հայերէն իմանար...

-Յետո՞յ,- հարցրեցի անհամբեր:

-Էլ ի՞նչ յետոյ. էդ ազնաւը ասես ինձ տնագ անելու մարմաջով, դիտմամբ մի քանի անգամ ազատօրէն թռաւ այս ափից միւս ափը, վերադարձաւ, նստեց նոյն ծառին ու ասես քամահրանքով նայեց ինձ... տարիներ են անցել, բայց երբեք չեմ մոռանում այդ թռչունին: Ինձ միշտ... համենատեղ եմ նրա հետ ու նախանձել: Քանի անգամ նա անարգել խախտեց սահմանագիծը, բայց ոչ այս ու ոչ էլ այն կողմում, ոչ որ ուշադրութիւն չդարձրեց, իսկ ինձ՝ մարդուս... Երկու կողմում էլ հաւասարապէս խոշտանգեցին, կտտանքների ենթարկեցին, հոգիս բերանս բերեցին... Մէկն ասէր՝ ո՞ր մեղքիս համար, ուղղակի ինձ չէին վստահում, գիտե՞ս, իրենց ողջ հզօրութեամբ հանդերձ՝ երկու կողմն էլ ինձնից վախենում էին... Ուզում էին իմանալ ովքեր են իմ տէրերը, որն է իմ առաքելութիւնը...

Օղանաւակայանի բարձրախօսից ասեց, որ մօտենանք ելքին: Սրահը աշխուժացաւ: Կանգնեցինք շարքի մէջ: Ելքից անցնելիս, պահանջեցին, որ ցուցամատը սեղմենք կարմիր լոյսով վառուած էլեկտրոնային «աչքին»... Անձնագրերի ստուգման կէտից անցնելուց յետոյ նոյնն էինք արել. արձանագրուած մատնահետքերով ստուգում էին ուղեւորների ինքնութիւնը: Ամէն ինչ կարգին էր:

